Հաստատում է՝
Տնօրեն՝ Ռ. Զաքարյան
«30» 09 2023թ.

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ «ԴԱՐԲԱՍԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՄՓՈՒՆՔ

(7-9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ)

ՏԱՐԵԿԱՆ 68 ԺԱՄ, ՇԱԲԱԹԱԿԱՆ՝ 2

ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԳՈՀԱՐ ՄԻՐԶՈՅԱՆ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Ընթերցանությունը մի կողմից մեծապես նպաստում է լեզվական գիտելիքների յուրացմանն ու գործնական կիրառմանը, մյուս կողմից կարևոր նշանակություն ունի անհատի համակողմանի զարգացման ու գեղագիտական դաստիարակության գործում: Գրականության երկերի հերոսների և կերպարների հոգեբանական վերլուծությունները հնարավորություն կտան հասկանալու և ճիշտ գնահատելու մարդկանց, նրանց հոգեբանությունը, սրա հիման վրա էլ կնպաստեն մարդկանց հետ հաղորդակցվելու, շփվելու և համագործակցելու կարողությունների մշակմանը:

Ուսումնական նյութերի հատուկ ընտրությամբ, ինչպես նաև կրթական գործընթացի կազմակերպման եղանակներով պետք է նաև շեշտվի հայ գրականության և մշակույթի կարևոր դերի գիտակցումը ազգապահպանության գործում:

Առաջարկվող նյութերի ուսումնասիրությունը պետք է կապել այսօրվա կյանքին, բխեցնել սովորողների նախասիրություններից, ցույց տալ բոլոր ժամանակներում մարդկային կրքերի բախումներ՝ բարու հաղթանակով, մարդկանց ճակատագրեր՝ հերոսական կամ դրամատիկ, պայքար հանուն վսեմ գաղափարների ընդգծել դրանց արդիական հնչեղությունը, պատմական անցյալի և այսօրվա բարդ ու բազմակողմանի կյանքի ներքին կապը, նպաստել մարդու և նրա հոգեբանության ճանաչմանը: Գրական երկերի գաղափարագեղարվեստական հարստության օգտագործումով սովորողների մեջ դաստիարակել մարդասիրական ոգի, բարոյական բարձր հատկություններ՝ բարություն, ընկերասիրություն, ազնվություն, պատվախնդրություն, պատասխանատվություն, հաստատակամություն, բարեխղճություն և լիարժեք ու ներդաշնակ մարդու բարոյակամային այլ հատկանիշներ:

Հանրակրթական պետական կրթակարգով և միջնակարգ կրթության պետական չափորոշչով նախատեսված հնգամյա միջին դպրոցը մի կողմից՝ սովորողների առաջ բաց է անում գիտելիքների և հմտությունների ձեռքբերման և դրանց գործնական կիրառման նոր հնարավորություններ, մյուս կողմից՝ մանկավարժությանը և մասնավորապես գրականության դասավանդմանը առաջադրում է նոր խնդիրներ դրանց լուծման համար նոր մոտեցումների մշակման անհրաժեշտություն:

Այդ մոտեցումներից առավելապես կարևորվում են՝

Ուսուցման բովանդակային կողմին առաջադրվող նոր պահանջներ, որոնց կատարումը կապահովի գիտելիքների ձեռքբերումը և դրանց կիրառական-գործնական յուրացումը, միջին դպրոցում սովորողների ձեռք բերած հմտությունների ու կարողությունների և արժեքային համակարգի ձևավորումը, ինչպես նաև ստեղծագործական ունակությունների զարգացումն ու մշակումը:

Մեթոդական նոր ուղեցույցների և հանձնարարականների մշակում, որոնք կապահովեն անհրաժեշտ գիտելիքների ինքնուրույն ձեռքբերումը, դրանց յուրացումը, ինքնուրույն աշխատանք կատարելու ունակությունների և շարունակական կրթություն ստանալու ձգտման հիմնավորումը:

Ուսումնական գործընթացում ժամանակակից հաղորդակցական և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում:

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1. Ներկայացնել գրական երկի կառուցվածքի, բովանդակության, գործողությունների զարգացման յուրահատկությունները
2. Ձևավորել լուռ կարդալու, լուռ կարդացած տեքստը պատմելու, հարցեր կազմելու, բարձրաձայն և արտահայտիչ ընթերցելու, ասմունքելու կարողություն
3. Պատկերացում կազմի բանաստեղծության կայուն ձևերի մասին. դրանց նմուշների իմացություն
4. Զարգացնել ընթերցանությամբ զբաղվելու, գեղարվեստական գրականության ոչ ծրագրային գործեր կարդալու պահանջ
5. Նպաստել ինքնաճանաչման, ինքնակրթության, ինքնակատարելագործման շարունակական ձգտմանը, գիտելիքներն ու հմտությունները, բարոյական սկզբունքները կյանքում կրառելու ցանկության և կարողության ձևավորմանը:
6. Արժևորել, սեփական գնահատական տալ գրական երկին. Հայ գրականության գաղափարական և հոգեբանական հարստության ընկալումով ձևավորել իր ժողովրդի կյանքն ու ճակատագիրն ըմբռնելու կարողության

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Խմբակի անդամները կկարողանան՝

1. Ընկալել և մեկնաբանել գրական երկերի գաղափարական բովանդակությունը
2. Վերլուծել գրական ստեղծագործությունները, բնութագրել գրական կերպարներին , նրանց մասին վերլուծական բանավոր և գրավոր խոսք կազմել
3. Կյանքում և կենցաղում դրսևորել գեղագիտական բարձր ճաշակ, ստեղծագործական մոտեցում կենսական խնդիրներին:
4. Արժևորել ազգային մշակույթը, ընդունել նախնիների ստեղծած հոգևոր արժեքները:
5. Ունենալ ինքնակրթության, ինքնադաստիարակության, ինքնակատարելագործման մղում՝ գրական երկերից սովորածի, նշանավոր մարդկանց օրինակով:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1. Անհատական գործունեություն

Անհատական գործունեություն ը դրսևորվում է սովորողի թե՛ դասարանական, թե՛ արտադասարանական աշխատանքների եղանակներով: Անհրաժեշտ պայմաններն ենէ հետաքրքրվածությունը, նախաձեռնությունը, նպատակասլացությունը...

Աշխատանքային ձևերն են՝

ա/ ընթերցանություն, լուռ և բարձրաձայն ընթերցանություն՝ համապատասխան հնչերանգի , շեշտադրության, դադարների պահպանումով

բ/ տեղեկատվության որոնում համակարգչով, հանրագիտարանների, լրացուցիչ գրականության , բառարանների, օժանդակ այլ նյութերի օգնությամբ . տեղեկությունների և փաստերի կուտակում, դասակարգում

գ/ տեքստային աշխատանք. ընթերցած նյութի բաժնում առանձին իմաստակիր հատվածների , դրանց վերլուծություն , համադրում, եզրահանգում:Հարցադրումներ կարդացածի շուրջ, հարցերի մշակում, պլանի կազմում:

դ/խոսքային աշխատանք /նամակ, ազդագիր, ակնարկ, հոդված, էսսե, կարծիք.../

ե/հետազոտական աշխատանք /կարդալ, ընտրել, խմբավորել, վերարտադրել, բանավիճել,քննարկել..../

զ/ ստեղծագործական աշխատանք /ինքնուրույն մտածողության դրսևորում, խնդիրների և հարցերի ճշգրիտ ձևակերպում, նախագծերի կազմում, երևակայության ազատ դրսևորում և ստեղծագործելու համարձակություն

2. Խմբային գործունեություն

Խմբային գործունեության անհրաժեշտ պայմաններն են՝ ազատ հաղորդակցումն ու շփումը, դիմացինին լսելու , հասկանալու, մտածված պատասխան տալու կարողությունը, հանդուրժողականությունը, համագործակցությունը, իր և խմբի անդամների ուսումնառության աշխատանքի և հաջողության համար պատասխանատվությունը:

Գործունեության ձևերն են՝ բարձրաձայն ընթերցանություն,, հետազոտական և ստեղծագործական աշխատանք, շնորհանդեսներ, բեմականացումներ, մրցույթներ նախապատրաստելը, իրականացնելը

3. Խաղային գործունեություն

Խաղային գործունեության անհրաժեշտ պայմաններն են՝ համագործակցությունը, աղատ և անկաշկանդ շփումը, փոխադարձ հարգանքը, սահմանված կանոնների պահպանումը, ինքնարտահայտվելու , սեփական կարողությունները դրսևորելու ձգտումը և հնարավորությունը:

Գործունեության ձևերն են՝

ա/ խաչբառեր, գլուխկոտրուկներ, հանելուկներ լուծելը

բ/ մրցույթներ, վիկտորինաներ կազմակերպելն ու անցկացնելը

գ/ դերային խաղեր ըստ իրադրության

դ/ բեմականացումներ ըստ գրական երկի:

ԾՐԱԳԻՐ/ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ
(տարեկան)

Հ/Հ	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ՆՊԱՏԱԿ	ԺԱՄ
1	***ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԸ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՐԳԻՉ***	-Սեփական կյանքում գրականության դերի արժևորում, գրական նոր ստեղծագործություններ կարդալու, անձնական գրադարան ունենալու ցանկություն, գրքի նկատմամբ կայուն հետաքրքրության պահպանում -գրական բնագրեր ընթերցելու, դրանց բովանդակությունը և հիմնական միտքը ընկալելու, ոճական և լեզվական արտահայտչամիջոցները ճանաչելու և քննելու կարողություն	6
1.	Բանաստեղծությունների ընթերցում		2
2.	Բովանդակության վերլուծություն, ասելիքի ընկալում		2
3.	Առոգանությամբ և արտահայտչականությամբ ասմունքի ձևավորում:		2
4.	Խաղ- մրցութ		1
2	***ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ***		4
5	Բանաստեղծությունների ընթերցում		1
6	Բովանդակության վերլուծություն, ասելիքի ընկալում		1
7	Առոգանությամբ և արտահայտչականությամբ ասմունքի ձևավորում:		2
3	***ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ ԹԱԽԾԻ ՈՒ ԱՇՆԱՆ ԵՐԳԻՉ***	-գրական հերոսի անձնական դրամայի և գեղարվեստական արտացոլման ընկալում -երկի պատկերային համակարգը , լեզվառճական առանձնահատկություններըընկալելու , մեկնաբանելու և վերլուծելու կարողություն	6
8.	Բանաստեղծությունների ընթերցում		2
9.	Բովանդակության վերլուծություն, ասելիքի ընկալում		2
10.	Առոգանությամբ և արտահայտչականությամբ ասմունքի ձևավորում:		1
11.	Դաս-միջոցառում՝ նվիրված Վահան Տերյանին		1
4	***ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ***	-ճանաչի սփյուռքահայ գրականության անվանի դեմքերին, նրանց որոշ գործեր	4
12	Ստեղծագործությունների ընթերցում		2
13	Բովանդակության վերլուծություն, ասելիքի ընկալում		1
14	Առոգանությամբ և արտահայտչականությամբ ասմունքի ձևավորում:		1

5	***ՊԱՏՄՎԱԾՔ,ՆՈՐԱՎԵՊ, ՎԻՊԱԿ,ՎԵՊ***	-Գեղարվեստական արձակի կառուցվածքային առանձնահատկությունների իմացություն -գրական ստեղծագործությունների բովանդակային իմացություն, գործողությունների զարգացման ընթացքը վերարտադրելու կարողունակություն -գործող անձանց բնութագրելու,նրանց արարքների հոգեբանական շարժառիթները ընկալելու և մեկնաբանելու կարողություն -գեղ. երկերը մասերի բաժանելուև շարադրելու, հարցեր, պլան կազմելու և մշակելու կարողության ամրապնդում -գրական երկի բովանդակության մեջ ստեղծագործական հավելումներ անելու, նոր սկիզբ և ավարտ գրելու կարողության ամրապնդում և զարգացում: -ծայրահեղ և արկածային իրադրություններում հերոսների վարքագծի ու բնավորության դրսևորման ընկալում	14 ԺԱՄ
15	Ստեղծագործությունների ընթերցում		4
16	Բովանդակության վերլուծություն, ասելիքի ընկալում		2
17	Գրական հերոսների բնութագրում		2
18	Գրական երկի բեմադրությունների նախապատրաստում և ներկայացում		6
6	***ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԸ ՀՈԳՈՒ ԲԱՆԱՍՏԵՂԾ «Մարդը ափի մեջ»***	-կարդացածի շուրջ կարծիք ,տեսակետ , քննական հակիրճ վերլուծություն գրելու կարողունակության զարգացում -արտադասարանական ընթերցանության նյութերը և այլ գեղարվեստական գրքեր կարդալու ցանկության խթանում -ՏՀՏ գործիքներով հարցաշարեր կազմելու կարողությունների ձևավորում	8
19	Բանաստեղծությունների ընթերցում		2
20	Բովանդակության վերլուծություն, ասելիքի ընկալում		2
21	Առոգանությամբ և արտահայտչականությամբ ասմունքի ձևավորում:		3
22	Վիկտորինա		1
7	***Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՆՎԱՐԴ ԹՈՒՄԱՆՅԱՆ «ՀՈՒՇԵՐ ԵՎ ԶՐՈՒՅՑՆԵՐ»***	-անձնական գրադարան ունենալու ցանկություն, գրքի՝ որպես	10

23	Հուշերի ընթերցում	գեղագիտական ապրումների աղբյուրի գիտակցում -գրական երկի հերոսի անունից հանդես գալու, բեմադրական աշխատանքներին մասնակցելու կարողության զարգացում	3
24	Բանաստեղծությունների ընթերցում:		3
25	Առոգանությամբ և արտահայտչականությամբ ասմունքի ձևավորում:		3
26	«Թումանյանը ժամանակակիցների հուշերում» զեկույց		1
8	***ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՔՆԱՐԸ***	-բանաստեղծական մտքի դրսևորումների, լեզվառճական նրամուծությունների և նոր արտահայտչամիջոցների ընկալման կարողություն	7
27	Բանաստեղծությունների ընթերցում		2
28	Բովանդակության վերլուծություն, ասելիքի ընկալում		2
29	Առոգանությամբ և արտահայտչականությամբ ասմունքի ձևավորում:		2
30	Հետազոտական աշխատանքի ներկայացում		1
9	***ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ***	-իմանա համաշխարհային գրականության ամենանշանավոր գրողներին և նրանց հայտնի ստեղծագործությունները	8
31	Ստեղծագործությունների ընթերցում		3
32	Բովանդակության վերլուծություն, ասելիքի ընկալում		3
33	Գրական հերոսների բնութագրում		2
10	***ՀԱՇՎԵՏՈՒ ԴԱՍ ԽԱՂ-ՄՐՑՈՒՅԹ***	-գիտելիքներն ու հմտությունները , բարոյական սկզբունքները կյանքում կիրառելու ցանկություն և կարողություն	1

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Հայոց լեզու և գրականություն» ,Ուսուցիչների վերապատրաստումների պլան և նյութեր/կրթակարգ,չափորոշիչներ, առարկայական ծրագրեր, ուսուցման նյութեր և նոր մեթոդներ/, Երևան-2006

2. «Գրականություն» 7-9րդ դասարաններ. ուսուցչի ձեռնարկ , Դավիթ Գասպարյան , Երևան , Տիգրան Մեծ 2011

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Տիտղոսաթերթ----------1

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ----------2

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ,ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ----------3

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ----------4

ԾՐԱԳԻՐ/ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ----------5
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------7